

Էդիկ Մինասյան, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017), Ե., ԵՊՀ հրատ., 2018, 512 էջ:

Է. Մինասյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է և բազմաձյուղ: Արժեքավոր են հեղինակի՝ Հայաստանի նորագույն պատմությանը, մասնավորապես Հայաստանի անկախ պետականությանն ու Արցախի ազատագրական հարցերին նվիրված աշխատությունները: ՀՀ անկախության 25 և Արցախյան շարժման 30-ամյակներին նվիրված սույն աշխատությունը բովանդակում է հայոց նորագույն պետականության քառորդդարյա պատմությունը՝ նկարագրելով Հայաստանում անկախ պետականության հաստատման և ամրապնդման, ՀՀ միջազգային դրության, արտաքին քաղաքականության, սոցիալ-տնտեսական վերափոխումների, հասարակական-քաղաքական, գիտակրթական և մշակութային կյանքի ուղին:

Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Է. Մինասյանը, հենվելով արխիվային փաստերի ու վիճակագրական տվյալների հիման վրա, իրականացրել է պատմաքննական վերլուծություն և գիտականորեն ներկայացրել հայկական երկու անկախ հանրապետությունների՝ Հայաստանի երրորդ հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին քաղաքականության, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի ձեռքբերումները, նաև թերություններն ու բացթողումները: Հեղինակը հանգամանորեն քննության առարկա է դարձրել ժամանակային ընդգրկումությամբ (անկախության գործընթացից սկսած մինչև մեր օրերը, մասնավորապես 2017 թ.) աչքի ընկնող հիմնախնդիրների մի ամբողջ շարք:

ՀՀ փաստական անկախության օրվանից անցել է շուրջ 25 տարի, սակայն առ այսօր չկա Հայաստանի երրորդ հանրապետության ամբողջական պատմությունն ընդգրկող համապարփակ աշխատություն: Որպես առաջին փորձ՝ Էդիկ Մինասյանի «Հայոց նորագույն պետականության քառորդ դարը» (1991-2017) մենագրությունը գալիս է լրացնելու այդ բացը: Ընդգրկում աշխատության էջերում հանգամանորեն վերլուծված են հանրապետության 20 և ավելի տարիների ներքին ու արտաքին քաղաքականության հիմնախնդիրները, զարգացման պատմական փուլերն ու առանձնահատկությունները:

Է. Մինասյանի կողմից ընթերցողի դատին ներկայացված մենագրությունը արժեքավոր է: Աշխատության յոթ գլուխներում համակողմանիորեն առաջ են քաշվում և վերլուծվում խիստ արդիական հարցեր՝ Արցախյան ազատագրական շարժումը (1985-1991), Հայաստանի անկախության հռչակումը և պետականության կայացման գործընթացը, Արցախի անկախության հռչակումը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացումը (1991-2016), Հայաստանի Հանրապետության կայացման ու ամրապնդման դժվարին ուղին (1991-2000), հայրենիք-Սփյուռք հարաբերությունները, 2001-2016 թթ. առնչվող պատմական բազմաթիվ իրողություններ:

Առաջին «Արցախյան ազատագրական շարժումը» գլխում, լուսաբանվել են Սում-գայիթյան ցեղասպանության, 1988 թ. ավերիչ երկրաշարժի հետևանքները, համազգային պայքարի ուղին, բռնագաղթը, ժողովրդական հուզումները և այլն: Հեղինակն արձանագրում է՝ 1990-ական թթ. սկզբին Հայաստանի ազգային անկախության վերականգնումը նոր շրջափուլ նշանավորեց հայոց նորագույն պատմության մեջ: Դրական նվաճումներին զուգահեռ ժողովուրդը կանգնեց բազում դժվարությունների և փորձությունների առաջ, ինչն էլ պայմանավորեց համակարգային բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունը:

Նշված գլխում պատմաքննական հանգամանալից և խորքային վերլուծության են ենթարկվել Արցախի հարցի վերաբացումն ու արցախահայության գոյամարտը (1989-1991 թթ.):

Երկրորդ՝ «Հայաստանի անկախության հռչակումը» գլխում, քննության են առնվել ԽՍՀՄ-ի փլուզման պետականության կայացման գործընթացը, 1995 թ. Սահմանադրության ընդունումը և ազգային բանակի կազմավորումը: Ուշագրավ է հատկապես հեղինակի կողմից հայոց ազգային բանակի կազմավորման երեք դժվարին փուլերի (առաջին՝ 1998 թ. փետրվար-1992 մայիս, երկրորդ՝ 1992 հունիս-1994 մայիս, երրորդ՝ 1994 հունիս-առ այսօր) առանձնացումը: Է. Մինասյանի համոզմամբ՝ կամավորական բանակները, չնայած իրենց տարերային, չհամակարգված գործողություններին, հայոց բանակի ստորաբաժանումների առաջացման կարևոր ու կենսունակ սաղմներ դարձան:

Երրորդ՝ «Արցախի անկախության հռչակումը» գլխում անդրադարձ է կատարվել Արցախի ազատագրական մարտերին, մասնավորապես Քարինտակի հերոսամարտին, Շուշիի ազատագրմանը: Է. Մինասյանն արձանագրում է՝ պատերազմի հաղթական ավարտով դադարեցին ռազմական գործողությունները՝ սկզբնավորելով ԼՂՀ հակամարտության բանակցային փուլը, որն առ այսօր շարունակվում է:

Պատմաքննական վերլուծությամբ ներկայացվել են Արցախյան պատերազմի երկրորդ փուլը (2016 թ. ապրիլ)՝ Քառօրյա պատերազմը, նաև Ադրբեջանի հետ ԼՂՀ շփման գծում մարտական գործողությունների ժամանակ բացառիկ խիզախություն ու անձնագոհություն դրսևորած մարտիկների սխրանքները:

Աշխատության չորրորդ՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացումը» գլխի ուսումնասիրման առարկան ԼՂՀ տնտեսության, սոցիալական, կրթամշակութային կյանքի վերականգնման և զարգացման գործընթացն է: Համաժողովրդական պայքարի հաղթանակով կերտված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հայ ժողովրդի հպարտությունն է: ԼՂՀ-ն, ըստ Է. Մինասյանի, կայացած պետություն է՝ իր բոլոր կառույցներով: Նույնիսկ պատերազմի սպառնալիքի պայմաններում ԼՂՀ-ն անհամեմատ ավելի ժողովրդավարական երկիր է, քան այն պետությունը, որն անընդհատ սպառնալիք է հնչեցնում հայ ժողովրդի դեմ:

Հեղինակը նաև արձանագրում է, որ Արցախի մշակույթը հասարակական կյանքի զարգացման, նրա պետականության կայացման գործընթացի լավագույն վկայությունն է: Վերջին տարիներին հնագիտական պեղումների շնորհիվ բացահայտված արցախյան Տիգրանակերտը հայերի վաղնջական ներկայությունը Արցախում փաստող պատմական կարևոր իրողություն է:

Հինգերորդ՝ «Հայաստանի Հանրապետության կայացման և ամրապնդման դժվարին ուղին (1991-2000)» գլխում անդրադարձ է կատարվում հանրապետության ներքին, միջազգային դրությանը, արտաքին քաղաքականությանը, հասարակական ու մշակութային կյանքին, ինչպես նաև Հայաստանի անկախության վերականգնման գործընթացում Հայ առաքելական եկեղեցու ունեցած դերակատարմանը: Հեղինակն իրավացիորեն նկատում է, որ Հայաստանի արտաքին քաղաքականությունը միտված է Կովկասում անվտանգության տարածաշրջանային համակարգի ստեղծմանը, ինչը հնարավոր է միայն ժողովրդավարության սկզբունքների ամրապնդման դեպքում:

Վեցերորդ՝ «Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները» բովանդակող գլխում ընդգծվում է կրթամշակութային, գիտական կապերի, իրականացվող զանազան միջոցառումների դերը Սփյուռքի՝ հայրենիքի հետ ունեցած կապերի ամրապնդման համատեքստում: Հեղինակը, հայրենիք-Սփյուռք առնչություններում կարևորելով համասփյուռքյան կազմակերպությունների դերը, ներկայացնում է այդ կառույցների լայնածավալ գործունեությունն արդի փուլում:

Վերջին յոթերորդ՝ «Հայաստանի Հանրապետությունը երրորդ հազարամյակի սկզբին» գլուխն ամփոփում է հայոց նորագույն պատմության՝ 2001-2016 թթ. ընթացքը՝ փաստելով, որ հանրապետության տնտեսության փլուզման կասեցումը, երկրի պաշտպանունակության ամրապնդումը, հասարակական-քաղաքական կյանքի զարգացման և այլ բնագավառների ձեռքբերումները խոսում են անկախության ուղին որդեգրած ժողովրդի անսպառ հնարավորությունների մասին:

Աշխատությունն ավարտվում է հետաքրքիր հավելվածով, որը ներառում է փաստաթղթեր՝ Արցախյան շարժման և Հայաստանի անկախ պետականության հռչակման

վերաբերյալ, Հայաստանի երրորդ հանրապետության նախագահների, վարչապետների, ՀՀ Գերագույն խորհրդի, Ազգային ժողովի նախագահների լուսանկարները, նաև ՀՀ նախարարների ցանկը՝ վերջիններիս կառավարման ժամանակահատվածի նշմամբ:

Պատմությունն անցյալն ու ներկան շաղկապող օղակ է, իսկ պատմության ճշգրիտ արժևորումը՝ առանցքային ու կարևոր քայլ ապագայի ճանապարհին: Ահա նմանօրինակ նպատակ հետապնդող աշխատությունների լույսընծայումը սերունդներին հնարավորություն կտա պատմական իրողությունների ճշգրիտ գնահատմամբ անաչառ կեցվածք ընդունելու, պատմական կարևորագույն փաստերը արժևորելու, ինչպես նաև ըստ արժանվույն գնահատելու անկախության հռչակման, պետականության կայացման գործընթացում մեծ դեր ունեցած անձանց, հայրենիքի ազատության համար նահատակված հերոս-մարտիկներին: Ուշադիր ընթերցողը նաև ազգային ինքնագիտակցության արժևորման կարևոր դասեր կքաղի աշխատության էջերում՝ Հայաստանի զարգացման և բարգավաճման ուղին տեսնելով ազգային միաբանության, մասնավորապես հայրենիք-Սփյուռք ամուր կապերի, պետականության ամրապնդման գործընթացում:

Համոզված ենք՝ պատմական փաստերի վերլուծության սկզբունքով և գեղեցիկ հայերենով շարադրված, կուռ կառուցվածքով աչքի ընկնող այս արժեքավոր աշխատությունը թարմ խոսք է հայ պատմագիտության մեջ: Էդիկ Մինասյանի՝ հայ ժողովրդի նորագույն պատմության պատմաքննական վերլուծության արգասիքը հանդիսացող սույն մենագրությունը հայոց պատմության սակավ ուսումնասիրված էջերից է: Այն կարող է զգալի հետաքրքրություն ներկայացնել և ուղղորդիչ արժեք ունենալ Հայաստանի նորագույն պատմության, մասնավորապես Հայաստանի անկախ պետականության ու Արցախի ազատագրական պայքարի հարցերով զբաղվող մասնագետների, պատմաբանների, միջազգայնագետների, ուսանողների, ընթերցող լայն հանրության համար՝ արժանի տեղ գրավելով նրանց պատմաճանաչողական հետաքրքրությունների շրջանակում:

Մերի Հովհաննիսյան